

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԻՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 61

1899 ՅՈՒՆԻՍ 5

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դրոսեկան, Վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ, **13** դրոսեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ: Թղթասարի ծախքը հմբագրութեան կը վերաբերի: Հասը **40** փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրոսեկի տեղ **105** դրոսե:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւն.—Բարեմիտ մարդերու միամիտ կարծիքները:

Ս. Յ. ԳԵՂԵՄԻ.—Կրթական հարցեր:

Ս. Մ. ԳՐԻԳՈՐԻ.—Սկզբունք Շարագրութեան:

Մ. Կ. ՄԻԼԻՏԻՆ.—Երկրագործութիւն:

Ղ. ԲՆԼԵՐ.—Շերամաբուծական:

Ղ. ԲՆԼԵՐ.—Սնանդարութեան:

Խմբագրութիւն.— Տիրար Պերճ Պռօշեանց եւ իւր Գրական
Փառասնամեակը:

Թղթակցութիւն, Ազգ. եւսյլն:

Հասը 40 փարայ

Տպագր. Գ. ԳՍՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատտէօի, Թիւ 4

„ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի Բ. ԾՐՋԱՆԸ

Ամբողջ հաւաքածոն՝ թիւ 1էն թիւ 52, կը ծախուի մէկ օսմ. ոսկի. իսկ իւրաքանչիւր անջատ թերթ 5 դահեկան:

Հանրագիտակի Բ. Տարեշրջանի մէջ կարգ մը անձնաւորութեանց թերթ ղըրկած ենք, իրենց բաժնեդինը վճարած չըլլալուն համար, ժամանակ մը վերջը դադրեցուցած ենք թերթերու առաքումը: Արդ՝ կը խնդրուի մեր Պատ. Գործակալներէն, որ բարեհաճին իրենց շրջանակին մէջ դռնուած այդպիսի անձնաւորութիւններէ ետ պահանջել թերթերը, և մեզ վերադարձնել:

Անոնք որ հակառակ մեր ազդարարութեան, կամ թերթերը ետ առլ չուզեն և կամ փոխարժէքը չի վճարեն, հետզհետէ իրենց անունը պիտի հրատարակենք հոս:

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՅԻ ՀՈՉԱԿԱԻՈՐ ԲՈՐԻՉԲԱՍԱՆ

Կեդրոնատեղի

Յ. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ ԵԶԲԱՐԵ ԴԵԳՐԱՆԸ

Ի ՋՄԻՏ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակ պիտոյք, դիւրամատչելի գներով:

Ծանօթ. — Մանրագիտական տեսակներուն և գիտնորուն վրայ փափաքողներու, մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ:

ՎԵՐՋԱՊԷՍ

Լոյս տեսաւ ՄԱՅՍԹԵՐՍՉԱՅԹ ՍԻՍԹԷՄԸ որ տասը շաբաթէն կուսուցանէ Թրանսերէն կարդալ ու սահուն կերպով խօսիլ:

Ամբողջ գործը կը բաղկանայ 15 տետրերէ, գին 30 ղրշ.:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ, որ կը բաղկանայ 3 հատորէ, այս անգամ վերստին տպագրուեցաւ Ա. մասը ընտիր թղթի վրայ: Գին 50 փրշ:

Այս քերականութիւնը որ պատկերներու վրայ նոր բնական մեթոտով կ'ուսուցանէ հայ լեզուն, գնահատուած է բոլոր մանկավարժներէ: Դիմել Մարգարեան գրատունը:

ՍԻՄՈՆ Յ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ճարտարագէտ ազգայինը, հնարած և մենաշնորհը առած է

ՀՐԱԼՈՅԻ ՍԱԽԱՔԱՐՏԻ

(allume-feu)

որ առանց դժուարութեան, վառարաններու կամ կրակարաններու ՓԱՅՏՆ ու ԱԾՈՒԽԸ կը վառէ՝ նոյն իսկ եթէ թաց շալ ըլլան, առանց ու ե անխորժ հոտի կամ անպատեհութեան:

Իւրաքանչիւր ծրար կը բաղկանայ 6 հրալոյց խաւաքարտէ, և կ'արժէ 30 սանթիմ:

Կը պատրաստէ՝ նորաձեւ այցետոմսեր, ՓՈՐԱԳԻՐ ԵՒ ԳՈՒՆԱԻՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՎ, որ յոյժ ճաշակաւոր նորութիւն մ'ըլլալով, դիմողները շատ գոհ պիտի մնան:

Կը պատրաստէ նաեւ, այլ և այլ պարզ և լուսանկարչական փորագրութիւններ:

Կ'ստանձնէ գրքերու, տետրակներու ևլն. սովորական կամ ճոխ կաղմ: ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ կ'ընէ, Արեւելի համար, մեքենաներու, Վենետիկեան հնութեանց լուսանկարներու ևն:

Մանրամասնութեանց համար դիմել հետեւեալ հասցէին:

Simon Nahabed
St. Lazare

Italie

Venise

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ


Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 61

1899 ՅՈՒՆԻՍ 5

ԲԱՐԵՍԻՏ ՄԱՐԴԵՐՈՒ

ՄԻԱՄԻՏ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ



... . Ձարմանայի՛ բան :
Մի՛հր. Թապաքեան ստորագրութիւնով, և
«Քննադատական ակնարկներ մեր Հանդէս-
ներուն վրայ» խորագրով յօդուած մը տե-
սանք, անցեալ չարթու, «Բիւրակն» շաբա-
թաթերթի 22րդ թւոյն մէջ :

Ձայնը կու գայ Ատաբաղարէն, մեզ ան-
ծանօթ անձնաւորութեան մը կողմէ, բայց
ինչպէս իր գրութենէն կը տեսնուի, շատ
«բարեմիտ» մէկն ըլլալու է Պ. Յօդուածա-
գիրը (ինչպէս նոյն թերթի խմբագրութիւնն
ալ կ'ըսէ՝ — պատիւ մ'ըրած ըլլալու համար
անշուշտ — այդ յօդուածի տակ դրած մէկ
ծանօթութեան մէջ), որ իր քննադատած՝
կամ քարուքանդած խնդիրը՝ առանց լրջ-
րէն ուսումնասիրելու, և առանց չընհայե-
ցութեամբ պատճառները թափանցած ըլլա-
լու, եւր է սնամէջ թէութիւններով պատ-
գամներ արձակել, կամ Հայ Մամուլին բըռ-
նելիք ուղղութեան սահմաններ գծելու ճշգ-
նիլ :

Լա՛ւ. կարծիք մ'է որ, կարծիքի իրա-
ւունքով հրապարակ կը նետէ, բա՛ւ է որ
նպատակը հանրագումար ըլլալ կ'ենթադրէ :
Բայց երբ հանրային գոյն ունեցող խնդիր մը
խճրճանքով կը շարորուի, երբ խնդիրը միա-
կողմանի կը դատուի, երբ ցոյց տրուած ո և է
մէկ սխալին բուն պատճառը՝ իրենպէսները
ըլլալ կ'ենթադրուի, և մանաւանդ՝ երբ ըս-
ուածներուն մէջ հակասութիւններ կը տես-
նուին, բայց մանաւանդ՝ երբ այդպիսի գրու-
թեանց տակ անձա՛հ նպատակներ—միջրոպ-
ներ—ալ կը նշմարուին, որոնք հանրային կար-
ծիքը թունաւորելու, ախտաւորելու կը
նկրտին, է՛հ, այն ատեն՝ մանաւանդ, մենք
ալ մեր նուիրական պաշտօնին բերմամբ, մեր
գրչի ծայրով նախ հակառակական մը կը
սրսկենք, և ապա՝ հանրային բեմէն ժողո-
վուրդի ուշադրութիւնը դէպ ի այն կը հրա-
ւիրենք, և կ'զգուշացնենք զինքը, մատնա-
նիշ ընելով թագուն նպատակը, որու ճշմա-
րիտ գոյնը որակել՝ յատկանշել չ'արժեր :

Բայց տեսնենք թէ՛ ի՞նչ ըսել կ'ուզէ Պ.
Յօդուածագիրը .

« Հանրագիտակ, բայց աւելի
« ճիշդ պիտի ըլլար եթէ ըսուէր «Մա-»

Եւ ինչո՞ւ արդեօք Հանրագիտակ. բառին անհուն խմատը սահմանափակել կ'ուզէք, միայն՝ գրական. պատմական, խմատասիրական, լեզուաբանական առումով: Ո՞չ ապաքէն Հանրագիտակ՝ բոլոր գիտութեանց եւ արուեստից մեկնարոնն է, իր համայնխմատ առումով: Դուք ա՛յդպէս կը կարծէք:

Բայց ի՞նչ հարկ կայ անունի վրայ խաղալ. մենք մեր ընթերցողներուն մեր սկզբբունքները, մեր կարծիքներն է որ կու տանք, եւ ոչ թէ թերթին անունը, ըլլայ ան այսօր Հանրագիտակ, վաղը Բիւրակն, միւս օր չեմ գիտեր ինչ. քանի որ այսօր Պսլայ մէջ հանգէսները իրենց ցանցառ թւով, մերթ գիտական կ'ըլլան, մերթ գրական, մերթ ազգագրական, մերթ համայնագիտական եւն. եւն. շնորհիւ բազմաշատ ընթերցողներու: Բայց սա գիտցէք որ, Լուսինեան՝ Հանրագիտակի արտօնութիւնը առած է մեզի համար. Լուսինեան արտօնատէրն է, բայց անոր զեկավարը մենք ենք, եւ մե՛նք՝ պիտի վարենք զայն իր անունին յարմար ուղղութիւն մը տալով իրեն միշտ. ինչպէս այսօր՝ եւ վաղը աւելի ընդարձակ ասպարէզի մը վրայ Հանրագիտակ պիտի ծեծէ այն ամէն խնդիրները, որոնք ազգային յառաջդիմութեան հետ առնչութիւն ունին, որոնք հանրային շահուն ու օգտին կը ծառայեն:

Բայց զարմանալին սա է որ, երբ միամտօրէն պատգամ կ'արձակէք Հանրագիտակի՝ մնալ իր գիտական ուղղութեան մէջ, եւ անկէ դուրս չելլել, անդին՝ ձեր յօդուածը պարունակող թերթին անհամեմատ տկարանքները ու սխալանքները չի տեսնել ուղեւոր, կ'ըսէք՝ «Բիւրակն՝ վերոյիշեալ հանդէսներու դերերը սեղմ կերպով պարունակելէ զատ(*), անոնցմէ բան մ'ալ աւելի ունի(**), այն է Բիւրակն, Արեւմտեան Հայոց «Հանդէս Ամսօրեան» է ան» կեցի՛ք. հիմա գորտին եւ եզան պատմութիւնը միտքս ինկաւ.: Ներողութիւն:

* * *

Երկու խօսք ալ Բիւրակնի Յարգ. Տնօրէնին:

(*) Թէեւ չէ՛. բայց ըսել է կրնայ ըլլալ եղեր. ուրեմն ինչո՞ւ Հանրագիտակը կը մեղադրէք. սիրելի՛ պարոն:

(**) Զարմանալի՛ բան. այդ չէինք գիտեր մենք:

Կ'ըսեն թէ, կօշկակարը կօշիկէն վեր ելլելու չէ. ուրեմն դուք ալ տեղերնիդ նստեցէք, վասն զի՝ ո՛չ Հանրագիտակ՝ իւր բռնելիք ուղղութեան մասին ձեզի խորհուրդ հարցնելու պէտք ունի, եւ ոչ ալ իր յարգելի բազմահմուտ աշխատակից Միհրան էֆ. Յովհաննէսեան, իր ուսումնասիրելիք նիւթին վրայ Զեպէ՛ կարծիք կ'ստատէ: Զաքարեայնք խթանի դէմ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԲԱՐԵԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԱԻԱԳ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համերաշխութեան քննարկը եւ անուշադիմ:

Ո՞րդէ՛ անուշադիմեա՛ն է խորհիմ:

Համերաշխութեան Լաթարանայ ղեկ:

Տղայ բարեկրթութեան կերպին եւ ժամանակին նկատմամբ արդէն շատեր շատ եւ գեղեցիկ թելադրութիւններ ըրած են եւ կրնան ընել. թէ ինչպէս եւ երբ պէտք է կրթիւ մանուկը: Ոմանք պիտի ըսեն թէ կրթութիւնը պարտի օրօրացէն սկսիլ. այլք՝ թէ երբ քայլ ու լեզու կ'ենէ. ուրիշներ՝ թէ երբ մանուկը հինգերորդ դարունը թեւակոխած է. պիտի ըլլան նաեւ նրբաքննին հոգեբանախօսներ՝ որ պիտի յանձնարարեն մանուկը լոյս աշխարհ գալէն 100 տարի առաջ սկսիլ անոր կրթութեան աւագ դործը, — անոր ծնողքը կրթել: Այս թելադրութիւններն յարգելով հանդերձ, առանց ներհուն բարոյախօսի եւ փորձ դատարարակի հովեր առնելու, ո՛չ ալ երեմիական ողբեր հիւսելու վայրապար, որ մեր ծնողքներն անցելոյն մէջ ջանացած չեն ապագայ սերունդը բարեկրթութեան պայմաններուն համաձայն մեծցնել: Այլ եղածը եղած սեպելով ես ալ իմ կարգիս նախ՝ իբրեւ զաւակ մը, ապա իբրեւ ուսանող մը, եւ յետոյ՝ իբրեւ ուսուցիչ մը կը փափայմ մի քանի թելադրութիւններ ընել խոնարհաբար:

1. Մենք և դասակարգի պարզ հասկացումները
 չենք կրնալ անհատական գործունեությունը — Մեր մեջ այս ու
 զին՝ համեմատելով երևյալ ոգին է որ կը պակ-
 սի: Մենք իր գաղափարը կը կրթէ հակառակ
 վարժարանին կրթութեան, և վարժարանն
 ալ հակառակ ընտանեկան կրթութեան: Հե-
 տեաւորար, դժուար չէ հասկնալ թէ է՞ր մեր
 տղայք, յաճախ, հակառակ մեր ու վարժա-
 րանի ջանքերուն, կ'ըլլան յոռերնայթ, դիւ-
 րամէտ զեղծ ու մեղծ մոլութեանց: Կը
 յուսամ թէ այս առթիւ պիտի ներեն ինձ
 ընթերցողներս որ քիչ մը իմ անձիս վրայ
 պիտի խօսիմ, քանի որ՝ իրրեւ զաւակ մը՝
 վարժապետութիւնս պիտի արձանագրեմ հա-
 մառօտիւ: Ես ինչ որ եմ, բոլորովին մեծ
 հօրս կը պարտիմ, որ թէեւ իր պատանեկու-
 թիւնը հովուական սրինգ ածելով անցուցած
 էր, սակայն, իր կրթութեան և գիտութեան
 համար ունեցած սէրն այնքան բուռն էր և
 ծայրայեղ, որ երբ դպրոցէն սուս գալով
 վարժապետին նկատմամբ գանգատէինք,
 երբէք կարեւորութիւն չէր ընծայեր խօս-
 քերնուս, իրաւունքի նժարը միշտ ուսուցչին
 կողմը կը հակեցնէր: Ամէն անգամ որ դպրոց
 երթալու դժկամակէի, մերթ ողորջանօք և
 մերթ սպառնալով սա սովորական բանաձեւը
 կը կրկնէր «Պ. Ս. ին ըսած եմ որ միտք ուտէ,
 կաշիք հագնի և ոսկորդ քիչ-քիչ շինէ փչէ»
 այսինքն կրթէ զիս, մարդ չինէ: Եւ իրա-
 ւամբ, թէեւ դպրոցական ընկերներս դա-
 սաւորին կը գիտադրէին, դպրոցէն խոյս
 կու տային և հակառակ պատուիրանաց և
 սպառնալեաց՝ ամէն շարաթ և կիրակի օրեր
 ռարերն ու ճորերը թախառելով պտուղներ
 և նոյն իսկ հաւ կը գողնային, սակայն ես
 բաւական քաջութիւն և համարձակութիւն
 չունէի այդ շահատուութեանց մասնակցելու,
 որովհետեւ եթէ դասատուին պատժէն ալ
 ազատ ըլլայի գոնէ մեծ հօրս յանդիմանու-
 թիւններէն, որ Ս. եղբոր «գըզըճըգ սօ-
 փայէն» ու ֆայախայէն ալ աւելի պակուցիչ
 էին, չէի կրնար խոյս տալ, և վրաս այնքան
 ազդեցութիւն ունէր. և ես ալ այնպէս կը
 հաւատայի թէ ո՛ր որ ըլլամ, ինչ ալ ընեմ,
 մեծ հայրս պիտի իմանայ: Աւելին կար՝ ինք
 կ'ընտրէր և կ'որոշէր ընկերներս, վրաս հոգի
 կու տար, իր գաղաթէն ինձի ալ բաժին կը
 հանէր: Այսու հանդերձ ամէն երեկոյ օր-
 դան դործերուս հաշիւը կը պահանջէր, —

այն օր ո՛րչափ զիր գրած էի, ո՛րտե հետ և
 ո՛ր գացած էի, և այլն, բայց մը չէի կրնար
 պահել իրմէն, որովհետեւ՝ հակառակ պարա-
 գային՝ ծխախոտի հարուածներու կ'ենթար-
 կուէի: Ամէն անգամ որ ուրիշներ իր ներ-
 կայութեան զիս գովէին, իր ալիպանձ պատ-
 կառելի գլուխը բանալով կ'օրհնէր զիս, ես
 ալ այս արարողութիւններէն վերջապէս այն
 համոզումն ունեցայ, թէ իրաւացի մեծ մարդ
 մը պիտի ըլլամ: Նորանոր պարգեւներով կը
 խոտտանար վարձատրել զիս եթէ՝ մինչեւ իր
 վերադարձն Կ. Պոլսէն՝ դասադիրքս աւար-
 տած ըլլայի: Միւս գաղափարներս վարժա-
 րանին մէջ միշտ կ'ապստամբէին դասատուին
 դէմ, և եթէ երբեք պատժուէին, իրենց
 ծնողքը կամ մօտաւոր ազգականներն իսկոյն
 Ս. եղբոր վրայ պօռում գոչումով կուռի
 կու գային, և խեղճ Ս. եղբայրը ահ ու գողի
 մէջ ինկած «բուռ» մը կ'ըլլար:

Յաւուրի է ըսել որ, նոյն այդ խաւարամիտ
 ոգին, դեռ այսօր իսկ լուսավոր սեպուած
 ծնողքներէն շատեր ունին: Իրենց զաւակաց
 բարեկրթութեան նախանձախնդիր ծնողք՝
 բաւական չէ որ կրթաւէր և ուսումնասէր
 ըլլան, այլ և անոնց հետ միասին պարտին
 ըլլալ անձնուէր և շրջահայեաց. բաց աստի՝
 քիչ մ'ալ հաւատք և վստահութիւն ունենան
 այն խղճամիտ դաստիարակաց վրայ՝ որոց
 խնամոց յանձնած են իրենց զաւակները, ո՛չ
 թէ միջամտեն անոնց կարգուսարքին ալ
 ոյժ տան և օգնեն անոնց: Տղան սա՛ վստա-
 հութիւնն ունենայ իր դասատուին վրայ՝ թէ
 անիկոյ իր պաշտօնին կիրառման մէջ աւելի
 հմուտ է և շրջահայեաց, թէ անոր պատուի-
 րանքներուն անստատելը անստատել է ծնո-
 րաց: Երբ տղան կը գանգատի ծնողաց կամ
 տեսչին, իրի այն թէ յանիրաւի պատժուած
 է, ծնողքը՝ ո՛չ բողբոլին անվստահ տղուն
 խօսածին, ո՛չ ալ իրաւունքի նժարը տղուն
 կողմը հակեցնելով, նախ՝ պարտի ստուգել,
 և ապա՝ երբ տեսնէ թէ տղան իրաւացի է և
 պատիժն՝ անտեղի, պէտք է տղուն սիրտն
 առնուլ, որպէս զի տղան չխախտէ իր դա-
 սաւորին վրայ ունեցած վստահութիւնը:
 Միով բանիւ՝ աշակերտն այն հաստատ համո-
 զումն ունենալու է թէ իր դասատուին բո-
 ւո՛ր ըրածներն ու խօսածները, պատիժ և
 վարձատրութիւն հաւասարապէս իր օգտին

և բարեպաշտ համար են: Եթէ երբէք ծնողքները դատաւարին դէմ ո՛ր է տառապանքներն մը և կամ դիտողութիւն մ'ունին՝ նպարտին անձամբ հրաւիրել զայն կամ այցելել՝ զիրար հասկնալու և համոզելու համար, և ո՛չ թէ տղան ներկայութեան դատաւարին դիտուն իրատ և յորդոր կարգալ, իրաւունք և դատողութիւն ցոյց տալ, և ուսուցանել թէ երբ ուսուցիչը պատժելու է աշակերտն, և երբ ներելու:

Ծնողքները կը ճանչնան որ իրենց վրայ աշխարհի մեծ համարում ունին, որ ամենագիտի հովեր առած, իրենց տղան քով խօսի, դատաւարին՝ աշակերտը կրթելու կերպերը ցոյց կու տան, կը թուեն անոնց փոխադարձ պարտականութիւններն, և որ յոռեգոյնն է, դատաւարին աստիճանն ու ազդեցութիւնը կը սահմանափակեն, թէ աշակերտը միայն վարժարանին մէջ պարտի յարգել իր դատաւարն, խօս արտաքույն վարժարանի ազատ է ըստ կամ: Բայց վերջապէս ո՞վ է որ կը տուժէ, — ծնողքը, գաւաճիլը:

Ուստի մեր խօսքը ամփոփելով կ'ըսենք, թէ քանի որ ծնողաց և դատաւարաց նպատակը մի և նոյնն է, այսինքն մանուկը կրթել, մարդ շինել, ծնողք և դատաւար կամ տեսուչ, ինչ որ է, պարտին իրենց ծրագրերն միացնել, իրարու համաձայնեցնել, համերաշխութեամբ գործել, երբեմն տղան այս կամ այն յոռի ունակութեանց համար միասնաբար խորհրդակցիլ յուզողութիւն բերելու համար զայն, տան մէջ ծնողաց բռնած ընթացքը համընթաց ըլլայ դպրոցին մէջ դատաւարին բռնած ընթացքին, և երբ տղան տեսնէ թէ՛ իր այս ինչ յոռի ունակութեանց համար ծնողքէն և դատաւարէն հաւասարապէս կը ճողկուի, և իր կրթութեան գործին մէջ ծնողք և դատաւարակ համերաշխութեամբ կը գործեն, այն ատեն տղան պիտի ստիպուի իր ուսուցչին բոլոր պատուիրանաց կատարեալ հլութեամբ անուշ, համակերպիլ, և այսու ո՛չ միայն ծնողք և դատաւար իրենց նպատակին հասած կ'ըլլան, այլ և վարժարանն ալ բարեկարգ փնտի մը կ'ունենայ:

2. Ո՞րքէն — — — — — և — — — — — Յարդ մեր խօսածները խղճամիտ, իրենց նախնական կոչման իրազեկ և հաւատարիմ դատաւարներու համար էին: Վարժարաններ ալ կան,

ուր պաշտօնավարող դատաւարակներ և ուսուցիչներ՝ թէ և առերեւոյթն պարկեշտ և քաղաքավար, և սակայն, անոնց զինչութիւնն հասկնալու համար, քիչ մ'առնեն անոնց հետ մտերմանալու և կամ, սէհ, անոնց ձեռքին ներքեւ ուսանող բլրալու է: Վարժարան չմտած տաղը հոգի ունենալու է որպէս զի երբ անոնք Ծր սպաննեն մէկը սշակերտին մնայ: Ըսել կուզեմ թէ անոնք իրենց աշակերտներուն իմացական, բարոյական և ֆիզիքական երբեակ կարողութիւնները յաւէտ կը սպաննեն, կը մահացնեն, կ'անդամուրւածեն և ապա՝... շրջանաւարտ կ'ընեն: Անոնք աշխարհով և աստիճանաւ կ'ուրախանան և կը հպարտանան, ինչ չափով որ յաջողին իրենց խնամոց յանձնուած դեռափթիթ կոկոնները՝ ծաղկունք բարոյական, իրենց մահաշունչ և աղտեղի խօսքերով և հեգնոտ ժպիտներով խամրել խորշակահար, պղտորել անոնց սլայծաւ և յստակ իմացական կորովն ու դատողութիւնը, ապուշ մը դարձնել վերջապէս, անտարբեր և անընդունակ՝ աշխարհիս յառաջդիմական ոգւոյն: Ո՞չ ապաքէն այս ցաւալի իրազեկութիւնն է որ կը տիրէ մեր վարժարանաց մէջ նախակրթարանէն սկսեալ մինչեւ բարձր. վարժարանները: Քանի՞ օրհնեալ է սա մանկապարտէզներու մանկավարժական մեթոտն ու կարգուսարքն: Երջանիկ մանուկներ, որոց համար՝ տարին ձմեռ չունի, որոց համար՝ երկինքն իրենց սրտին պէս անամպ է, որոց բաւարարին մէջ ո՛չ վիշտ կայ և ո՛չ ցաւ, այլ՝ խինդ ու ծիծաղ, որոց համար վարժարանը, մանկապարտէզը, իրենց զուարթութեան և խնդութեան միակ աղբերակն է. որոց միտքն ու հանձարը խնդի և զուարթութեան մէջ բացուելով՝ թէ ու թռիչ կ'առնուն, որովհետեւ վարժուհին՝ մանկապարտիզին պահապան հրեշտակը՝ գորովագութ մօր մը պէս կը գուրգուրայ իրենց վրայ: Եւ սակայն, քանի՞ օն կ'արգահատիմ և ի սրտէ կը կարեկցիմ այդ մանուկներուն վրայ, երբ կը խորհիմ թէ մանկապարտիզին մէջ կազմուած այդ համարձակ և անվեհեր բնաւորութիւնը՝ իրենց անէծք մի պիտի ըլլայ, երբ այդ բարոյական մատաղատունկերն իրենց բնիկ կայքէն, վայրէն, անջատուելով, խլուելով դրուին նախակրթարանի և կամ Բարձր. վարժարանի մը մէջ, բոլորովին հա-

կապաւորեալ իրենց նախապայքին: Այս պիտի նմանի տաքուկ բաղնիքէն սառնորանի մէջ նետուելուն, յերկնից ի վժռիս վտարուելուն:

Եւ ահա այս վայրկենին է որ մանուկը կը սկսի ատել վարժարանն ու դիտութիւնը, և ըլլալ անկիրթ և անթեքելի, և, որ յոռեգոյնն է, մանկան ընդարոյս կարողութիւնները կը գոռանան:

Այս տեսութեամբ՝ մեր առջեւ կ'ենէ ուրիշ նկատելի աւագ և կենսական խնդիր մը, այն է՝ «վարժարաններու հակընթացքը և ան համերաշխութիւնը հանդէպ իրարու»: Ուստի, բաւական չէ որ նորանոր մանկապարտէզներ բանանք, այլ անոնց հետ միասին ջանադիր ըլլանք բարձր. վարժարաններն ու նախակրթարանները մանկապարտէզին շարունակութիւնն ընել: Բայց սոսկ ծրագրերն և դասերը մանկավարժական ուղղութեամբ գծելու և աւանդելու վրայ ալ չէ խնդիրը, ո՛չ. կրնայ ըլլալ որ մեր դասատուներն ուսանց Թրօպէեանի վկայագրին ալ յաջողին դասաւանդութեան գործին մէջ. և սակայն թող ներուի ինձ բոհել թէ այս պիտի նմանի ծռքիթ կապկին, թաթեղ արջին և ականջեղ իչուն սարքած նուագահանգիտին, որ ի՛նչ կարգով ալ նստին, տակաւին աններգաշնակ պիտի ըլլան իրենց յորինած երգն ու նուագը, ցորչափ իրենք նիազ կը գտնուին ախորժաղեր ձայնէ, և քանի որ միտն ձայնը միտին չյարմարիր և ո՛չ մէկ խազի վրայ: Պէ՛տք է որ մեր բոլոր դասատուները վկայեալ ըլլան ո՛չ թէ սոսկ չոր ու ցամաք կցիւտուր գիտութեամբ, այլ և բարոյապէս, որ՝ փոխանակ աշակերտին «ես»ը սպաննելու՝ տեղի՛ զօրացնեն անոր անհատականութիւնը: Թէեւ կ'ամչնամ ըսելու, սակայն կարգ մը ուսուցչաց և ուսուցչուհեաց անորակելի խոստովանութիւնն այն եղած է թէ յաճախ՝ բնութեան գեղեցիկ ձիրքերով օժտուած աշակերտաց չա՛տ աւելի սէր և ներող ոգի ցոյց տուած են, քան թէ ուշիմ և բարեսիրտ, թէ և արտաքուստ տգեղ՝ աշակերտաց. նոյնը ցոյց տուած են հարուստի գաւկնեւուն, թէեւ անոնց հարստութենէն դանկ մ'իսկ իրենց գըրսրանը մտած չէ ու պիտի չմտնէ ալ: Եւ դեռ ինչե՛ր... Եւ սակայն, կը յուսանք որ գէթ մասամբ կը դարմանուի այս, եթէ Պատ. Ուսումն. Խորհուրդը իր աժեմ-չաժեմի վկա-

յական բաշխելու մարմնով քիչ մը չափաւորէ, ի սէր ազգ. մանկուոյն բարեկրթութեան և ի քաջալերութիւն արժանաւորագոյններուն:

Կ. Պոլիս

Ս. Յ. ԳՐԶԼԵԱՆ

Ս Ս Ջ Բ Ո Ւ Ն Ք

Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

2. ՀԱՅ ԲԱՌԵՐՈՒ՝ ՀԱՅԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՈՎ, ԳՈՐԾԱԾՈՒՄ

Նախընթաց յօդուածով ցոյց տրուեցաւ, թէ հայերէն շարագրութեան մէջ, բարւոք սովորութիւնով վաւերացեալ բառեր միայն գործածուելու են. բայց ասիկա բաւական չէ:

ՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆԸ կը պահանջէ որ, իւրաքանչիւր հայերէն բառ գործածուի ա՛յն նշանակութիւնով, զոր բարւոք սովորութիւնն յատկացուցած է իրեն:

Հայերէն բառի մը ոչ-հայացի նշանակութիւնով գործածումը՝ յանցում է հայերէն բառարանի դէմ, և կը կոչուի Անպատշաճութիւն:

Անպատշաճութեան գլխաւոր պատճառներն են՝

Ա. Հայերէն բառի մը՝ ուրիշ հայ բառի մը հետ ունեցած «երեւութական» կամ «ձայնական» նմանութիւնը. — կան հայերէն բառեր, որոնք երեւոյթով կամ ձայնով այնքան նման են իրարու, որ կրնան իրարու տեղ առնուիլ:

Այս կարգի սխալներ յաճախ կը դործեն մաքուր հայերէն խօսելու ճիգ ընող անուս անձեր և զրաւոր արտադրութեան սկսող աշակերտներ:

Օր մը ծերուկի մը դիտել կը տրուէր թէ Բասթօռի դրութիւնը շերամաբոյծներու արհեստը ապահոված է: «Հունտ-

ճինները»՝ ըսաւ ծերուկը, «հունտերը «օ-
րացոյցով» կը քննեն հիմա»:

Մաքուր հայերէն խօսող ընտանիքի
մը սպասուհին, ընկերութեան մը մէջ
մտնելով՝ երբ տեսաւ թէ քանի մը ան-
ձեր կը փռնգտային, ըսաւ. «ամենքնիդ
ալ «հրաբուխ» եղած էք»:

Աշակերտ մը՝ «Եւ էր նա դուստր
Բաթուէլի» նախադասութիւնը պայպէս
թարգմանած է. «Ու անիկա «Պատուե-
լին» աղջիկն էր»:

Անցեալ օր գրքոյկի մը մէջ սա նա-
խադասութիւնը տեսայ. «Օղիին քիչ չա-
փով «գործողութիւնն» իսկ քնասա-
կար է»:

Բ. Հայերէն բառի մը՝ օտար բառի
մը հետ ունեցած ձայնական նմանու-
թիւնը. — Կան հայերէն բառեր, որոնք
ռամիկներու կողմէ գործածուած են ո՛չ
թէ իրենց նշանակութիւններով, այլ այն
նշանակութիւններով զորոնք ունին իրենց
նմանաձայն թուրքերէն բառեր:

Գայլը ձին «փարատեց» (փարալա-
մագ):

Պարտքը կը բաշխեմ (պախշ էթմէք,
պաղըշլամագ):

Գ. Հայերէն բառի մը օտար համա-
զօրին մէկէ աւելի նշանակութիւն ունե-
նալը. — Այսօրեան դիտել կու տայ թէ՛
«Առանձին մտադրութեան արժանի են»
հայերէն բառերուն տաճկերէնի նմանո-
ղութեամբ առած երկրորդական և եր-
րորդական նշանակութիւնները, որոնք՝
որչափ ծածուկ մնացած են, նոյնչափ
աւելի զգուշալի են: Զորօրինակ, որով-
հետեւ տաճկ. «սիւրմէք» բայը թէ՛
«քշել» կամ «աքսորել», և թէ «տեւել»
կը նշանակէ, նոյնպէս հայերէն քշել
բային ալ նոյն կրկին կամ երեքպատիկ
նշանակութիւնները գրուած են: Այս-
պէս ալ կը գործածուի չափ անգամ՝

Առնել, (փոխանակ՝ զնել.)

Կանչել, (երդել). Կոխել, (տպել).

Հանել, (հնարել). Խօթել, (խայթել).

Աչք ընել, (ակնարկել).

Գաշել, (նկարել, և վիշտ կրել).

Շունը սիրել, (փայտայել).

Տիրութիւն, (պաշտպանութիւն).

Գ. Նշանակութեան նմանութիւն. —
Կան բառեր որոնք ուղիղ նշանակութեան
նմանող նշանակութիւնով մը գործած-
ուած են:

ՕՐԻՆԱԿՆԵՐ

Շողիին ոյժը ո՞վ «հնարեց»:

Ձայնագիրը էտիսըն «գտաւ».

«Հասուն» տղայ մը ունի:

Ընտանիքին «ամբողջ» անդամները
ներկայ էին:

«Մինակ» կը խօսի, չի գործեր:

Քոյրմայուս իրեն «բնաբան» ունէր յա-
րատելութիւն:

Այս օրինակներուն չափերով մէջ
առնուած բառերը շփոթուած են հետեւե-
ւալ բառերուն հետ. — գտաւ, հնարեց,
հասուն, բոլոր, միայն, նշունաբան:

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆՆԵՐ

Խօսքի մը մէջ իւրաքանչիւր բառ
կրնայ գործածուած ըլլալ իրեն յատուկ
նշանակութիւնով, և սակայն՝ խօսքը իբր
ամբողջ առնուելով՝ կրնայ պարունակել
բառերով հակասութիւն մը որ անպատ-
շաճութիւն կազմէ:

«Բոլոր աշխարհի հետ խաղաղութեան
մէջ ենք, և մարդկութեան մնացեալ
մասին հետ մեր ունեցած բարեկամա-
կան յարաբերութիւնները պահել կը
ջանանք»:

Ասիկա նախադասի մը խօսքն է որ
չափ ծաղրուեցաւ և ապա ուղղուելով
պաշտօնական արձանագրութեան մէջ
հետեւեալ ձեւն առաւ. —

«Աշխարհի բոլոր միւս ազգերուն հետ
խաղաղութեան մէջ ենք, և անոնց հետ
մեր ունեցած բարեկամական յարաբե-
րութիւնները պահել կը ջանանք»:

կան անպատշաճութիւններ, տրամաբանօրէն անհեթեթ, որոնք հստակութեան առջեւ կ'արգարանան:

Ազամ՝ ամենալաւն ի մարդկանէ, յորդուոց իւրոց,

Եւա՝ չըքնաղագեղն յաղգըս կանանց, իւրոց գըստերց:

Միլտոն

Անիկա վիթխորի և ժանտատեալ հրէշ մըն էր, ունէր երեք գլուխ, որոնց իւրաքանչիւրն աւելի ահարկու էր քան միւս երկուքը:

Այս օրինակին իմաստը ճշմարիտ չի կրնար ըլլալ, բայց երեւակայութիւնը զանիկա ճշմարիտ կարծել կու տայ, բաղդատուած առարկաներէն իւրաքանչիւրը՝ անոր նայուած վայրկեանին՝ նշանակուած յատկութեան կողմէ միւսնեքէն աւելի գերազանց երեւցնելով:

Շար.

Պարտիզակ

Ս. Մ. Գ. Գ. Գ. Գ.

ՆՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԵԱԿԱՆ

ՀՈՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՓԱ.

(Տե՛ս Հանրագիտակի 46 թիւը)

ՀՈՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ այն գիտութիւնն է որ կը խօսի հողերու կազմութեան, անոնց պարունակած տարրերու տեսակին, ֆիզիքական և քիմիական յատկութիւններուն վրայ, և այլն:

ՀՈՂԸ երկրի մակերեւոյթին այն մասն է որուն մէջ բոյսերը իրենց արմատներով կ'առնեն այն տարրերը՝ «սնունդը» որ բոյսին աճման պիտի ծառայէ:

Երկրագործական տեսակետով կրնանք դանադանել երկրի երեսին մշակուած մասը: որ կը կոչուի «հող» կամ «մշակելի երկիր»: այս հողը ամէն տարի երկրագործական գործիքներով կը հերկուի, կը քրքրուի, կ'ընդունի սերմը, աղբը: այս վերջինը հողը արգասաւորելու կը ծառայէ:

Մշակելի հողին տակ կը գտնուի անմշակ մաս մը, որ կը կոչուի «ենթահող», որուն մէջ ծառերու և կամ մի քանի բոյսերու արմատները կը թափանցեն ու սնունդ կ'առնեն:

Անհրաժեշտ է գիտնալ թէ մշակելի հողը լինջօդէս կազմուած է:

ՀՈՂԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.— Եթէ ակնարկ մը նետենք մեր չորս կողմն, կը տեսնենք որ երկրի վրայ գտնուող կարծր մարմինները (հողային) նոյնատեսակ չեն (homogene), այսինքն միեւնոյն նիւթ մը բաղկացած չեն. հոս կը տեսնենք առատ կիր, հոն աւաղ, ուրիշ տեղ կաւ, անդին կաւիճ, աստին կրաքար և ընդհանրապէս այս նիւթերէն տարբեր տարրեր խառնուրդներ:

Բոլոր հողերն և զայն կազմող տարրերն առաջ եկած են ֆիզիքական և քիմիական գործիչներու շնորհիւ ապառաժ լեռներու տարրալուծումէն և փոխիացումէն. այն գործիչներն են չիւում, ջուր, օդ, սառ, հալում, թթուածին, ածխային թթու, ջերմութիւն, բոյսեր և այլն, և այլն:

Անշուշտ ապառաժներու փոխիացումն և տարրալուծումը մէկ կամ անոնք տարուան գործ չէ, այլ հարկւրաւոր, հաղարաւոր դարերու արդիւնք:

ԺԱՅՈՒՆ.— Մեր ոտքերուն տակ կոխկըտած մշակելի հողերը յառաջ եկած են, ինչպէս ըսինք, ժայռերու տարրազաղրումէն. արդ այս ժայռերը՝ որոնց մինչեւ այսօր երկրի մակերեւոյթին վրայ նոյն իսկ կը հանդիպինք՝ կը բաժնուին երկու գլխաւոր խումբերու:

Ա. «Հրաբխական» կամ «պլուտոնական» ժայռեր:

Բ. «Սաւանիստ» կամ «ջրանիստ» ժայռեր:

Քիտական աշխարհը շատ մը փորձերէ և ենթադրութիւններէ վերջ հետեւեցուցած է թէ, երկրագունդը արեւէն բաժնուած կազային օդակ մ'էր, յետոյ այս կազերը ֆի-

գիրքական օրէնքներու հապտակելով ամբողջութեամբ են, ու աւելի վերջը երկար ժամանակ հեղուկ հրկիզեալ կոյտ մ'եղած է: Յետոյ մակերեւոյթը կ'սկսի սղակի ու կը կազմէ հաստատուն խաւ մը, որ երթալով կ'աճի ու կը թանձրանայ: Այս խաւն երբեմն երբեմն ասղին անդին ճեղքուելով հրկիզեալ հեղուկ մարմիններ դուրս կը բզկին, ինչպէս այժմ մեր հրարուխներէն «լալայ» կոչուած նիւթը դուրս կը ժայթքէ. այդ հեղուկներն մակերեւոյթին վրայ կը սղակին, կը կարծրանան. ու ասոնք են որ կը կոչուին «նախնական, հրարխական» կամ «պլուտոնական ժայռեր»:

Արդի հրարուխներն ալ մինչեւ այսօր հրարխային ժայռերու կազմութեան կ'աշխատին: Բայց այժմ հրարուխներու գործունէութեան դարը անցած է. անոնց արտադրութիւններն շատ սահմանափակ են:

Յետոյ գործելու ուժը գլխաւորապէս ջուրինն էր: Այն վայրկեանէն որ ջուրի կաթիլն երեւցաւ երկրի մակերեւոյթին վրայ, մինչեւ այժմ՝ ջուրը քանցած՝ ճգնած է՝ երկրիս կեղեւը կերտարանալիս ընելու: Յիրաւի, կը տեսնենք որ մէկ կողմէն ջուրը կը քանդէ լեռները, բլուրները, միւս կողմէն նորանոր ժայռերու և բլուրներու կազմութեան կ'աշխատի: Ջուրերու մեքենական զօրութիւնը լաւ ըմբռնելու համար, բաւական է դիտել անձրեւէ մը վերջ բլուրներու վրայ գտնուած ափսոսները: Դիտելի է նաև, թէ ջուրը իր աւերիչ դերը միայն պարզ հողին վրայ չէ՝ որ կը խաղայ, այլ նաև կարծր ապառաժները, բարձր լեռները՝ որոնց գագաթները գրեթէ միշտ ամպերուն մէջ մնալու դատապարտուած են, ամէնքն ալ ենթակայ են ջուրին շնորհիւ քայքայուելու, փոշիանալու, և անոր հետ ուրիշ տեղեր փոխադրուելու: Ուրեմն գետի մը ջուրը երբ ծովը կը թափի, իւր հետ կը տանի մեծ քանակութեամբ հողի, քարերու մանրիկներ. և երբ ծովը հանդարտ է, այս մանրիկները ծովեզերքէն գրեթէ 2—300 մետր հեռաւորութեամբ, իրենց ծանրութեան շնորհիւ ջուրին յատակը կը նստին, և հոն մեծ ճնշմամբ և շատ մը քիմիական փոփոխութիւններով կը կարծրանան, ու կը կազմեն ժայռեր՝ որոնք «ջրանիստ ժայռեր կը կոչուին, և ասոնց տարբարադրումն ու փոշիացումն յառաջ եկած հողերը «խաւանիստ»

կամ «ջրանիստ հողեր կ'անուանեն: Ջրանիստ ժայռերու երեւոյթը մեր աչքին տուել ալ ամէն օր տեղի կ'ունենայ, բայց շատ տկար կերպով:

Ժայռերու և լեռներու տարբարութեամբ և փոշիացումը, միայն ջուրին շնորհիւ չէ՝ որ տեղի կ'ունենայ, կան նաև ուրիշ գործիչներ՝ ինչպէս շիւում, օդ, սառույժ, հալում, թթուածին, ածխային թթու, ջերմութիւն, բուսականութիւն և այլն, որոնց գլխաւոր ներուժն վրայ կ'արժէ ակնարկ մը նետել:

Օդին մէջ գտնուած բնածխային թթուն, կամ ջուրին մէջ լուծուած այս խառնուրդ կազը, ժայռերու ալքալի մետաղներուն հետ կը միանան, կազմելու համար իւրաքանչիւրին համապատասխանող բնածխայինները:

Ջուրն ալ մեր սովորական լուծողականն է, որ ուղղակի կամ անուղղակի կերպով (սառույժ և հալում) ժայռերու փոշիացման և տարբարադրման ծառայած է ու կը ծառայէ. նոյնպէս ջուրը ժայռերու ճեղքերուն մէջ մտած է, ու ձմրան մէջ սառելով, իւր (ջուրը) տարածականութիւնը մեծցուցած է, ու այսպէս ժայռի մեծ կտորներ առաջ եկած են:

Վերջապէս, բոյսերն ժայռերու քայքայման համար կարեւոր դեր մը խաղացած են: Նախ ամենաստորին բոյսերն սկսած են աճիլ, որոնց արմատիկները աճած են ժայռերու ճեղքուածքներուն մէջ. այս արմատները տեսակ մը թթու կ'արտադրեն, որ ժայռին այդ մասը փոշիացնելու կը նպաստէ և այսպէս՝ նախ ժայռին վրայ փոքրիկ հողի խաւ մը կազմուած է: Եթէ հովու կամ ուրիշ ուրիշ հոռետեր գան այս խաւին վրայ, պիտի կրնան դիւրաւ աճիլ, ու այս նոր բոյսին արմատներն ալ աւելի պիտի տարբարադրեն ու փոշիացնեն ժայռը, ու այսպէս մշակելի հողը պիտի կազմուի:

Դ-ը.

Սերգեյ

Մ. Կ. ՄԱԼԱԲԱՆ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾԱԿԱՆ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ

ԵՒ

ԻՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

(Շար. թիւ 60 և)

—o—


Ահնամերձը՝ որ, տեսականորէն կրնայ վերածուիլ մէկ ոսպենիկի մը, բոլոր մանրացոյցներու մէջ երկու հարթա-կորնթարդ ոսպենիկներէ կը բաղկանայ, որոնց կորնթարդ երեսը առարկային դարձած ըլլալով, պէտքէն համեմատ, իրարմէ քիչ թէ շատ՝ հեռու հաստատուած են։ Վերի ոսպենիկը կը կոչուի «ահնամերձի խոշորացոյց» (loupe de l'oculaire), իսկ վարինը՝ դիտավայրի ոսպենիկ (lentille de champ)։

Տեսնենք այժմ թէ, բաղադրեալ մանրադիտակի մը մէջ լուսաւոր ճառագայթները ի՞նչ ընթացք կ'ունենան, և թէ պատկերացումը ի՞նչպէս կը կազմուի։

(i) Առարկան, իրացոյցին վառարանէն քիչ մ'անդին դրուած ըլլալով, — ինչ որ անհրաժեշտ պայմանն է իրական պատկերացում մը յառաջ բերելու համար — կ'երթայ իրական պատկերացում մը կազմելու (II)ի վրայ՝ հտիագիր, և բուն առարկայէն աւելի մեծ, որ արդիւնք է, իրացոյցի դրութեան ունեցած, վառարանային փոքրիկ հեռաւորութեան՝ և կամ աւելի ճիշդը, պիտի երթար այդ պատկերացումը հոն կազմելու, եթէ լուսաւոր ճառագայթները իրենց ճամբուն վրայ (Z) ոսպենիկին չի հանդիպին, որ ակնամերձի դիտավայրային ոսպենիկը ըլլալով, պատկերացումը (I'I)ի վրայ կազմել կու տայ։ Այս պատկերացումը կը կազմուի խոշորացոյցի վառարանին՝ և այս ոսպենիկին մէջտեղը, որ՝ ըստ տեսականին, յառաջ պիտի բերէ հետեւաբար, (I'I)ի վրայ նոր պատկերացում մը, (i'i)ի հակառակ ուղղութիւնով (հետեւաբար՝ չըջուած՝ առարկայի դիրքին նայելով), աւելի ուժգին (virtuelle) և մեծցած։

Պիտի հարցնէք անշուշտ թէ, դիտավայրի (Z) ոսպենիկը ինչի՞ կը ծառայէ։ Իրացոյցը

թափանցող ճառագայթները համախմբելով, «գործիքին դիտավայրը» կը խոշորցնէ, և այս պատճառաւ ալ կոչուած է «դիտավայրի ոսպենիկ»։ Ուրիշ կերպ ըսելով, իր ներկայութեան չնորհիւ, կարելի կ'ըլլայ տեսնել



ՄԱՆՐԱՅՈՅՑ

այնպիսի կէտեր, որոնք՝ առանց տնոր գոյութեան, ակնամերձի մէջ թափանցող ճառագայթներու տրճակին մէջ չպիտի նշմարուէին, որովհետեւ՝ բեկիւնիման շեղումն ալ միեւնոյն անգամ տկարացնելով, լուսաւոր ճառագայթները չեն տարրալուծուիր. հետեւաբար և՛ պատկերացումի գունաւորում տակի չունենալով, ծառայան անգոյն՝ բայց պայծառ և յստակ կ'երևի։

DD և dd ստոծանիներ հաստատուած են՝ առաջինները իրացոյցին և ականամերձին մէջտեղը, իսկ երկրորդները ականամերձին երկու սալենիկներուն մէջ, որոնք՝ թող կու տան անցնելու, մի միայն կեդրոնական ճառագայթները. և այս կերպով ալ գնաւածեւութեան շնորհիւ կը տկարացնեն: Գոգաւոր հայելի մը՝ լուսաւոր ճառագայթները կը խտացնէ քննութեան ենթարկուած առարկային վրայ. այս խտացումը անհրաժեշտ պէտք մ'է՝ գործիքին չափազանց խոշորցնող կարողութեան պատճառաւ: Հայելին՝ պատկերին վրայ (m) նշանագրով ցոյց տրուած է:

Բ.—ՄԵՔԵՆԱԿԱՆ ՄԱՍԸ.— Մանրացոյցի մեքենական մասը կը բաղկանայ հետեւեալներէն: 1.—Խողովակ մը, որ կը կրէ իրացոյցը և տկնամերձը. — 2.—Խողովակը կրող նեցուկը, որու վրայ հաստատուած է նաեւ, առարկան լուսաւորող հայելին, և առարկան կրող հարթակը՝ որ «բլաթին» (platine) կը կոչուի:

1.—Խողովակը.— Խողովակը՝ կամ մանրացոյցի «մարմինը», ինչպէս վերի պատկերէն կը տեսնուի, պարզ արդիւ (շիւրինճ) սնամէջ գլան մ'է: Ներսի կողմը սեւ գոյնով ներկուած է, որպէս զի՝ լուսեղէն ճառագայթներու ցողացումով պատկերացումի խանգարում տեղի չունենայ: Սովորաբար երկու խողովակներէ կը բաղկանայ, որոց մին միւսին մէջ կը մտնէ, ինչ որ նպաստաւոր սարքուած մ'է՝ ըստ կամս մանրացոյցի մարմինը երկնցնելու համար, որ կ'օճանէ խոշորացումը անճեցնելու. որովհետեւ՝ իրացոյցի պատկերացումը որչափ հեռուն գոյանայ՝ ինչ որ ձեռք կը բերուի՝ գործիքը առարկային մօտեցնելով, այնչափ աւելի խոշոր կ'ըլլայ՝ զոր կ'ստացուի, պատկերացումը աչամերձին և ոսպենիկին մէջտեղ բերելով:

Խողովակին վարի ծայրը՝ որ առարկային դարձած է, կոնաձեւ կ'ըլլայ, և կ'ընդունի իրացոյցի կազմածը, որ իրարու հեղուտուած (վիտալանմաք) չրջանակներու մէջ հաստատուած, մէկ քանի ոսպենիկներէ կը բաղկանայ: Խողովակին վերի բերանը լայն բացուած է, ուր կը մտնէ՝ ուրիշ գլանաձեւ խողովակ մը, որ ականամերձը կը կրէ: Այս ականամերձի խողովակը հեղուտուած չըլլար բուն մանրացոյցի խողովակին, այլ սահելով կ'իջնայ,

կ'ելլայ, և պէտք եղած ատենն ալ դիւրութեամբ կրնայ փոխուիլ: Բոլոր այս կազմածները այնպէս կարգադրուած են որ, թէ իրացոյցին, և թէ ականամերձին ոսպենիկները կատարելապէս իրարու համակեդրոն են:

2.—Խողովակին նեցուկը.— Մանրացոյցին մարմինն ալ՝ իր կարգին, սահելով կը մտնայ ուրիշ գլանաձեւ խողովակի մը մէջ. այս վերջինը զօգուած է ուղղաձիգ սիւնակի մը, և իր վարի կողմը կը կրէ յօդուածաւոր գոգաձեւ հայելին, որ դիւրութեամբ ամէն կողմ կրնայ դառնալ: Ասոնցմէ՝ զատ, սիւնակին վրայ կարգ մը լայնակատար կոճակներ կը գտնուին, որոնք կը ծառայեն մանրացոյցի մարմինը իջեցնելու կամ բարձրացնելու: Մեծ մանրացոյցներու վրայ կը գտնուին երկու գլխաւոր կոճակներ, որոնք մասնաւորապէս ոսպենիկար ձողակի (crémaillère) մը հաղորդ գտնուելով, ի պահանջել հարկին, մանրացոյցի մարմինը արագութեամբ կ'իջեցնեն, կը բարձրացնեն. երրորդ մ'ալ՝ մանրաչափական հեղույսի (ճիւղաթա) մը հաղորդ ըլլալով, մանրացոյցի մարմինը տրուելիք թեթեւ՝ կամ դանդաղ շարժումները յառաջ կը բերէ:

Ինչպէս ըսած ենք, սիւնակին վրայ կը գտնուի նաեւ առարկայակիր հարթակը, որ բոլորչի կամ քառանկիւնաձեւ կ'ըլլայ, իր կեդրոնը ծակ մը կայ, ուրիշ ներս վը թափանցեն առարկան լուսաւորելու ծառայող լոյսի ճառագայթները:

Շատ մանրադիտակներու՝ մասնաւորապէս պզտիկներուն սիւնակը՝ իր ուղղաձիգ դիրքը անխախտ կը պահէ. բայց մեծերունը կը շարժի առանցքի մը շուրջը. և այս տեսակները կը կոչուին «խոնարհող մանրադիտակներ»:

Շար.

Ղ. ԲՈՒԱՏ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Շերամաբոյճներու ուշադրութեան կը յանձնարարենք, թերթիս կողքին երկրորդ երեսին վրայ գտնուած Պուլուտեան եղբարց՝ ՄԱՆՐԱԳԻՏԱԿԻ ազդը:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ

ԿԵՆՏԱՆԵԱՅ ՏԱՐԻՔԸ ՃԱՆՉՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Շար. թիւ 60 էն)

Երբ հերձաւորամ մը բռնակ սկսի, նախ սրածայր և ճերմակ գիծ մը կ'երեւի լինդրին առջեւի կողմը. այս գիծը կը կոչուի ակաւային «առաջակողմեան եզերքը»: Մէկ քանի օր յետոյ կ'երեւի, «վերջնակողմեան եզերքը»: Ակաւան՝ իր այս վիճակին մէջ՝ որ տակաւին և ոչ մէկ մաշումի ենթարկուած չէ, «կոյս» կը կոչուի: Վերի ծնօտին ակաւաները վարիններէն կանուխ կը բռնին: Երբ վարի և վերի ակաւաները իրարու հետ շխուկով, իրենց գագաթի երեսը պատող արծնոսկրի կամ որ նոյնն է, արծնիկի խաւը կ'որոնցնեն, այն ատեն կ'ըսուի որ, ակաւան «մաշած» է: Ակաւային առաջակողմեան եզերքը՝ վերջնակողմեանէն բարձր ըլլալով, միշտ մաշումը անկէ կ'սկսի: Երբ ակաւան մաշելով, առջեւի կողմը ետեւի կողմին հաւասարի, այն ատեն կ'ըսուի որ, ակաւան «սրբուած է»: Այս միջոցին, ակաւային կատարը մակարդակ ձեւ մը կ'առնէ, և կը կոչուի «ատամնային սեղան»: Վերջապէս, երբ ակաւային վերին եղջերակի պարկատակը բոլորովին անհետանայ, այն ատեն ատամնային սեղանի կեղրոնը սպիտակագոյն նշան մը կ'երեւի, և կը կոչուի «ատամնային տատը», որ ուրիշ բան չէ, բայց եթէ արմատային խոռոչի կեղրոնական մասը՝ որ գոցուած է, պայծառագոյն՝ և արծնիկէն աւելի կակուղ ոսկրակերպ գոյանուտէ մը (տես Հանր. թիւ 60, Անասնաբուծական յօդուածի վերջին պարբերութիւնը): Ատամնային աստղը տարիքի ճանաչողութեան մասին նուազ ասոյգ տեղեկութիւններ կրնայ տալ, ուրիշ չափ անգամներ սխալումներ յառաջ կու գան:

Հերձատամները կարգ մը տարբերութիւններ կը ներկայացնեն իրենց մէջ: Անկիւնները միջնէկներէն աւելի կարճ կ'ըլլան, ասոնք ալ հատուներէն կարճ: Ատամնային եղջերակի խորութիւնն ալ ակաւայի երկայնութեան համամատ կ'ըլլայ. կարճինը քիչ, երկայնինը

աւելի խոր: Վերին ծնօտի հերձատամներու եղջերակը աւելի խոր կ'ըլլայ, քան վարիններուը: Ասկէ զատ՝ վերի հերձատամներու կամարը վարինէն աւելի լայնանիւտ ըլլալով, վարի կամարի «անկիւն»ները վերիններուն մէջտեղը կը պատահին, որով, վերի անկիւններու մէջտեղը տեսակ մը խոռոչ կը ձեւանայ. այս խոռոչը մինչեւ որոշեալ աստիճան մը, տարիքները ճանչնալու մէջ բաւական օգտակար դեր մը կը կատարէ:

ԱՄՍՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ ՀԵՄԵԼԱԿԱՆՍ

(2Ի, ԷՇ, ՋՈՐԻ)

Հեծելականաց ատամնաբուսութիւնը մէկ քանի որոշ շրջաններու կը բաժնուի. այսինքն՝

1.—Կաթնային հերձատամներու երեւումը, որ տեղի կ'առնենայ՝ կենդանիին ծնունդէն մինչեւ 10րդ ամիսը:

2.—Վերոյիշեալ հերձատամներու սրբութիւնը՝ 10րդ ամիսէն մինչեւ 30րդ ամիսը:

3.—Մնայուն հերձատամներու երեւումը, որ կ'սկսի 30րդ ամիսէն՝ և կը տեւէ մինչեւ 60րդ ամիսը:

4.—Վերոյիշեալ մնայուն հերձատամներու սրբութիւնը՝ որ տեղի կ'առնենայ 5էն մինչեւ 8 տարեկան:

5.—Ստորին հերձատամներու ատամնային սեղանի հաւելթակերպ և կլոր ձեւափոխութիւնները, որու յատակը կը սկսի երեւիլ, ատամնային կեղրոնական աստղը, սրտաքին եղջերակի պարկատակին հետ. այս վերջինը կ'աներեւութանայ քիչ ատենէն, որ նշան է կենդանիին 12 տարեկան ըլլալուն:

6.—Ստորին հերձատամներու յաջորդական եռանկիւնային ձեւափոխութիւնը, և վերի հերձատամներու արտաքին եղջերակի պարկատակին աներեւութանալը՝ 12էն 17 տարեկան:


7.—Երկանկիւնացում, կամ մէկ կողմէն դէպի միւսը՝ ստորին հերձատամները կը տափանհան, 17էն 20 տարեկան և անկէ վերջը:

Բոլոր այս երեւոյթները երկու որոշ շրջաններու կը վերածուին, որոնց մին կ'սկսի կենդանիին ծննդէնէն, և կը տեւէ մինչեւ կաթնային ակաւաններու ամբողջ երեւումը: Իսկ երկրորդը՝ մնայուն ակաւաններու շրջանն է:


Ձիւրուն համար, իւրաքանչիւր տարիքի սկզբնաւորութիւնը դարձունին կը հաշուուի, ընդհանրապէս այն ատեն ծնելուն համար:

Ա. ՇՐՋԱՆ. — Կաթնայիններուն երկուսը. — Հեծելականներու մարուկը (Ժայ) առանց ակապի կը ծնի:

Ամենէն առաջ հատուները կ'սկսին երեւիլ, որ մարուկի ծննդեան 6րդ օրէն մինչեւ 10րդ օրը կ'ամբողջանայ: Այս միջոցին նաեւ տեղի կ'ունենայ, իւրաքանչիւր ծնօտի 3 առաջին կաթնային աղօրտամներու երեւումը: (պատ. 1.)



1.—6էն 10 օրուան նորածին մարուկի մը ստորին ծնօտի առաջնակողմը, երկու հատուներով:



2.—1էն մինչեւ 6 ամսուան մարուկի մը ստորին ծնօտը՝ երկու հատուներով, և երկու միջնակողմը (հատուններու իւրաքանչիւր կողմը):



3.—8էն մինչեւ 8 ամսուան մարուկի մը ստորին ծնօտը՝ որ կը կրէ 2 հատուները, երկու միջնակողմերը, և երկու զեռաբուս անկիւնները:

Մէկ ամիսէն մինչեւ 6 ամիս, իւրաքանչիւր կարգի միջնակները: (պատ. 2.)


6էն մինչեւ 8 ամիս անկիւնները: (պատ. 3.)

Դիւցիկ հեծելականը (կաթ ուտող)՝ մինչեւ այդ հասակը միայն իր մօրը կաթով սնանելուն, ակապները կոյս կը մնան. բայց որովհետեւ, անկիւնները բուսնելէն վերջը սովորաբար կաթէն կարելով, բուսնելէն ետքը կը սնուցանեն զայն, այն պոտեն ակապները

կ'սկսին արագութեամբ սրտել: Երբեմն կը պատահի սակայն որ, ակապներու սրտելը ճիշդ ամիսէն առաջ կատարուի. այս պարագան տեղի կ'ունենայ, երբ մարուկը իր մօրը կաթէն զատ բուսնելէն նիւթեր ալ ուտէ:


10րդ ամիսը իւրաքանչիւր ծնօտի 4րդ աղօրտամը՝ որ մնայուն է, լինդրերը պատուելով դուրս կը ցցուի: Այս միջոցին՝ ստորին ծնօտի կաթնային հատունները կը սրտուին:

12րդ ամիսը միջնակները կը սրտուին, և 2 տարեկան եղած ատենն ալ անկիւնները (վերին ծնօտի ակապներու սրտելը միշտ վարիններէն ժամանակ մը ետքը տեղի կ'ունենայ): (պատ. 4.)



1. 1. Հատունները — 2. 2. Միջնակները. — 3. 3. Անկիւնները:

4.—Երկու տարեկան մարուկի մը ստորին ծնօտի առաջնակողմը:



5.—Երկու և կեսէն մինչեւ երեք տարեկան — կաթնային հատունները ինկած՝ և իրենց յաջորդած են մնայունները:

Բ. ՇՐՋԱՆ. — Երկրորդ տառամարդուութիւն. — Անկում կաթնայիններու, և երեւում մնայուններու. — Մնայուն ակապները կաթնայիններուն ետեւը չարուած ըլլալով, յաջորդաբար դուրս ելլել կ'սկսին՝ նախ իրենց առաջնակողմի եզերքը ցոյց տալով. ետեւի եզերքը մէկէն մինչեւ երկու ամիս վերջը կ'երեւի:

Երեսներորդ ամիսէն (2 ու կէս տարեկան) կաթնային հատունները լոյնալով, իրենց տեղը կ'երեւին մնայունները՝ մինչեւ 3 տարեկան: (պատ. 5.)

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

ԱԶԳԱՅԻՆ

ՏԻԱՐ ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ԵՒ

ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ

Հանգէս այն տիրաւոր լուրերուն՝ զոր մեր Կովկասեան կամ Արեւելեան հայ թղթագիրք ու լրագիրք գուժեցին, նկատմամբ մեր Մասեաց Հայերուն Ազգային դպրոցներն յարքունի գրաւման տրակներէն ինդրոյն, Կովկասեան Հայոց մամուլն փայլուն ներկայացուցին զ«Տարագ»՝ մեզ կը բերէ իր մայիս 16 թերթով, Մայիսի չորի ծաղկոտ, ծիծաղկաւ դէմքով, Տարա Պերճ Պռօշեանցի գրական գործունէութեան Բառասնամակի ուրախաւորութեամբը:

ՏԱՐԱԶՆ՝ իր մայիս 16 թերթը գրեթէ ամբողջովին նուիրած է Վէրթի անուան հեղինակ՝ Աբովեանցի աշակերտին, Սօսի և Վարթիքերի հեղինակին, Աւարայրի Դիւցազին Դստեր՝ Անձկալի Շուշանայ երգչին, գրական Տօնի սրտառուչ նկարագրութեանցը: Իւր կողքին վրայ ձուածեւ ծաղկեփունջ չըջանալի մը մէջ զետեղած է Տ. Պ. Պռօշեանցի պատկերը. որոյ սնարին վերեւ՝ կիսաբոլոր արձանագրուած է՝

ՄԵՐ ՎԻՊԱՍԱՆ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ

ԵՒ

պատկերին յանդիմանքով սապէս շարունակուած,

ԲԱՌԱՍՆԱՄԵԱՅ ԴՐԱԿԱՆ ԱՐԴԻԻՆԱԽԷՏ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆԱՑ ԱՌՀԱԽԱՏՁԵԱՑ

ՏԱՐԱԶԻ ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ:

* * *

Պերճ Ստեփանոսեան Պռօշեանցը 1837 յունիս 3ին կ'ծնի Աշտարակ գիւղին մէջ: Մեր և ամենուս՝ այնքան սիրական ու սիրաձայն Միսեմիսկ երգն Աշտարակէն հոգե-

գրած է Աշտարակեցի Ե. Բ. Երսէս ընդհանուր Հայոց անուան վեհափառ Հայրապետը:

Իր նախնական կրթութիւնը կ'ստանայ իւր գիւղում, և Մոնու Ս. Գէորգ Գէորգայ վանքում:

1851ին՝ Երսէս Ե. Հայրապետը կ'որդեգրէ Պռօշեանցը, և Թիֆլիսում իր հիմնած Երսէսեան վարժարանին մէջ կ'կրթէ:

1855ի մայիս ամսուն, կ'աւարտէ իւր դպրոցական ուսմանը չըջանալ, և նոյն տարուան սեպտեմբեր ամսուն՝ կ'թեւաւորէ ուսուցչական առարկայը, իւր հայրենիքին՝ Աշտարակայ՝ դպրոցին դասախօս կ'կարգուի: Ժամանակ մ'ալ ձրի վարած է տեղւոյն գործակալ-քարտուղարի պաշտօնը:

1858. Թիֆլիս կ'անդափոխի, և հայկական լեզուի ուսուցիչ և տեսուչ կ'կարգուի Տէր Յակոբեանց Տիար Նիկողայոսի նորաբաց վարժարանին, որ վերջէն մասնաւոր ժամնագրութիւն կ'վերածուի: (Ա' ալ արդեօք Ամենողորմածին ողորմութիւն տրուած է):

1859 ապրիլ 18. Մեկու Հայ. ի մէջ կ'արշարուէ գողթան երգչաց Բամբիւն ու Փանգիւռ. կամ Հայ նուագաց հեղինակ Նահապետ-Ալիշանայ Շաւարշանի շուշան դստերը շուշանագոյն դուստրը — Սանդուխտ — կամ մեր բոցաւուն ուսուցիչ Տիար Թ. Թէրզեանի ողբերգած Սանդուխտին՝ հեռուէն հեռու կամ մօտէն մօտ՝ յիշեցնող կերտած «առ անձկալին՝ շուշան՝ դուստր վարդանայ» ճակատագրած բանաստեղծականը:

1860. (Թեւական՝ ուր օտմանեան Հայքս Օտմանեան մեծագոր Սուլթանայ հայասիրական զգացմանց ու մտածմանց գործնական ու գերագրական տառնձնաշնորհումները կը վայելենք, Մոսկովի հայաստակ Հայ՝ մեր արեւնակցաց բարի նախորդ շարժելու չորի կ'օժտուինք՝ Ազգային Օրէնքի առանձնաշնորհումով մը, որ կ'սահմանադրէ կամ կ'բարենորոգէ մեր ազգային նախնական պարտիքն ու իրաւունքն — թէ հանգէս և ի հեճուկս մեր եկեղեցին, և մեր Ազգն իր մէջ ընկուզող՝ կլանող «Պօթէնաին» կայանակալ օրինաբան, որ կերպով մը շուրջ 15 դարեր առաջ Բաղդեղոնի ժողովոյն Հայոց կողմէ մերժուած օրթոտոքսական կրօնի վեհապետութիւնը կ'ողջնեն), այո՛, այդ թուականին՝

1860 թ. Երևանի քաղաքի անհատական կարգադրության, և Երևանի մէջ «Երկրագործներ» կոչւող անհատական կարգադրության, և Հայ Պատգամաբար Երևան հրատարակել, և Հայերն ու իրենց Ազգն ու Եկեղեցին մասնակցութեամբ ու հրապարակաւ պաշտօնապէս ծանուցանելու՝ առաջին քաջութիւնն ունեցող Հայ կղերական բանասէր գիտնական — Կիրիկեան Ժողովուրդային յղացող և կոտորած մարմնացող — թէ եւ այժմ գիտնական — նշանաւոր Հայ հանձարին դպրոցում, 1870ին պատմութեան հայկապ Դասարանը՝ և իր ուրիշ ազգային հետաքննող ու ծանօտող հրատարակութեամբ ծանօթ, Տիար Մարկոս Ալաբաքեան կ'հրատարակէ ռուս հայտնակ Հայոց արարատեան լեզուով «Կոռնի»-ը, ուր 1860—1863 կ'աշխատակցի Տ. Պ. Պաշտեանց, որ իւր քերական կամ քերականը եղող Տ. Մ. Ալաբաքեանցի Ամսթերդամ խմբագրի օգնական և սրբագրիչի պաշտօնով, և «Կոռնի»-ի առաջին թէքն սկսեալ կ'հրատարակէ պարբերաբար իր «Սօս» և «Վարդիթեր» ազգային վէպը, որ անշուշտ Թաղիսթեանցի «Սօս» և «Սօնդիպի» հոմերապիկէն, և քիչ մ'ալ «Պող և Վիրգիլի» բանաստեղծապիկէն ներշնչուած սիրելի կ'թուի:

Տ. Պ. Մ. Պաշտեանց, այս ատենները կը հիմնէ Թիֆլիզի՝ որով և ամբողջ Կովկասեան Հայոց ազգային կանոնաւոր անդրանիկ դպրոցը՝ «Գայիանեան» անունով, մասնակցութեամբ Չիլիեան Տ. Սիմոն քահանայ Ս. Հոր, և հոգաբարձութեամբ հանգուցեալ բարեպաշտ և ուսումնասիր ու Ազգասէր Տիկին Եղիսաբէթ Յովհաննէսեանի (մեր արեւմտեան ազգանուէր և դպրոցատէր Հայուհիք անշուշտ ներշնչուած իրենց եւ այն և Ներսիսեան կրթական նախաձեռնութիւնն ունեցող Կովկասեան Հայուհիներէն):

«Տարագ» իւր Պաշտեանց կենսագրականին մէջ՝ կ'իշխատակէ նաեւ թէ՛ Մցիսիթաի՝ երբեմնեան Հայ-Վրաստանի մայրաքաղաքն եղած՝ այժմեան Թիֆլիսին մէջ, այն ատեններ մի քանի Տիկիներ՝ մասնաւոր տուններու մէջ (Պոլոյ այլ և այլ թաղերու իրենց մասնաւոր տանց մէջ աղաներ կրթող և «վարպետ տուն» կոչուած նախնական վարժուհիներու պէս անշուշտ) կ'ուսուցանէին վրացերէն, թերեւս և հայերէն ընթերցանութիւն:

«Տարագ» կ'ըսէ նաեւ թէ՛ Պաշտեանցի անդրանիկ «Գայիանեան» դպրոցը պէտք չէ չիտիթել, վերջին տարիներս փակուած Թիֆլիսի Մոլնու եկեղեցւոյն գաւթում գտնուած «Գայիանեան» Ազգային ուսումնարանին հետ՝ որ բացուած էր 1870ին:

Տիար Պ. Մ. Պաշտեանց իր նախաձեռնութեամբ, առաջին անգամ ինքը կ'սկսի Թիֆլիսի քաղաքային թատրոնին մէջ, հայ ներկայացումներ տալ: Մինչեւ այն ատեններ, մասնաւոր տուններու և Ներսիսեան վարժարանի դահլիճին մէջ կատարուած էին Հայ լեզուով թատերական ներկայացումներ:

1863—64. Շուշայ թեմական դպրոցին մէջ Հայ լեզուի և հայ գրականութեան ուսուցիչ և տեսչի օգնական կ'ըլլայ: Մին էր նաեւ այս ատեն հանգուցեալ Տիկին Մարիամ Հայրապետեանցի հիմնած Շուշայ ազգային անդրանիկ դպրոցի նախաձեռնութիւն:

1867—68. Տ. Պաշտեանց տեսուչ և ուսուցիչ էր Ագուլիսի տղայոց դպրոցին, զոր հիմնովին կ'բարեկարգէ, կ'հիմնէ Ագուլիսի ազգային վարժարանը (*), որոյ հաստատութիւնը կ'ընծայէ վեհանձնորէն իր հեղինակած Ագուլեանց դպրոցներու գրքոյկին մէջ՝ ժողովրդեան նախաձեռնութեանը:

Պաշտեանցի խորհրդով և հսկողութեամբ շինուեցան Ագուլիսի Թովմայ Առաքելաի վանքի գաւթին մէջ, չորս ձեռք ուսուցչական հայկապ բնակարանները, որով ամբողջացաւ դպրոցի շէնքը: Պաշտեանցի անմիջական մասնակցութեամբ, 2 շաբաթուան մէջ, 28,000 ռուսլի հանգանակութիւն կամ նուէր կ'ժողովուրդի Ագուլիսի մէջ, ի նպատակ յիշեալ երկսեռ ուսումնարանաց ապահովութեան:

1868ի ամառը՝ Պաշտեանց իր ծննդավայր Աշտարակի մէջ մնալով, տեղւոյն հաշտարար դատաւոր Տ. Մարկոս Դաւթիանեանի հետ կ'բարեկարգէ, և հոգաբարձական սխտէսի կը վերածէ Աշտարակի ծխական դպրոցը:

1872ին. «Մշակ»-ի կ'աշխատակցի:

1876. Կ'բանայ Աստրախանու մէջ թաղային ծխական երկսեռ դպրոցը:

1877. «Փորձ» ամսագրին աշխատակցի անգամ և սրբագրիչ կ'կարգուի:

(*) Թէեւ նոյն ատեն Ագուլիսի մէջ Տ. Հայրապետ Գալանթեանց իր սան մէջ հաստատած էր մասնաւոր երկսեռ դպրոց մը:

1879էն մինչեւ—Ռուս կառավարութեան կողմանէ—Հայ դպրոցներու առաջին փակումը (1885). Կ'փարէր Երեւանի թեմին և Կարսի վիճակին թեմական տեսչութեան պաշտօնը. նոյն տուէն այդ երկու թեմերուն մէջ կային 150ի չափ մեծ ու պզտիկ ծխական դպրոցներ, որոցմէ շատերն ինք բացած էր: Այս ատեններն էր որ Պաշտօնացի աշխարհաւորի կ'ընդունէր զբարար Աւետարանը, որուն տպագրութիւնը մեծագործ Գէորգ Կաթողիկոսի անակնկալ մահուամբը յետաձգուեցաւ: Սակայն՝ ի վարձատրութիւն իւր այս գրական երկասիրութեան, Գէորգ Կաթողիկոս Աստուածաբանութեան Մագիստրոսի տիտղոսով պատուած է. և նուիրած է Աւետարանի աշխարհաբար թարգմանչին՝ 35 տարի գործածուած արծաթեայ ջրոյ բաժակ մը, արծաթեայ բաժակակալով մը հանդերձ: Ատեն մ'ալ Երեւանու Հոգեւոր դպրոցին մէջ ուսուցիչ եղած է:

1887—1898 սեպտ. Ուսուցիչ եղած է Թիֆլիսի Ներսէսեան Ազգային Հոգեւոր դպրոցին մէջ:

1889էն 2 տարի՝ «Մուրճ» ամսաթերթին խմբագրութեան աշխատակցած է:

Այդպիսով՝ կ'յաւելու «Տարազ»՝ «Քառասունեւոր» տարի է որ, Պերճ Պաշտօնացի կը գործէ, ինչպէս մանկավարժ՝ և քառասուն տարի է գրիչ ի ձեռին անդուլ-անդադար կ'երկասիրէ:

Պաշտօնացի իր տպեալ երկերէն զատ՝ ունի նաև շատ մը անտիպ գրուածներ ալ, ի շարս որոց՝ նշանաւոր տեղ մը կ'գրաւեն «Յուշիկներ»ը՝ որք շարունակուած են մինչև 1870ի վերջերը:

ՊԵՐՃ ՊԱՇՏՈՆԱՆՑԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Պաշտօնացի Տիկինն է Աննա Դօլդեան՝ դուստր Տոքթոր Մարտիրոս Դօլդեանի. մօր կողմանէ՝ թոռն՝ Ժորժիգական բանաստեղծ Սայաթնովայի, հարազատ քենին Տիար Մարկոս Աղաբէգեանի, որի քոյրն է Տիկին Սրբուհի Երէցեանը:

Ունի վեց զաւակ, երեք դուստր և երեք ուստր:

Անդրանիկ դուստրը՝ Պերճանոյ՝ Թիֆլիսի օրիորդաց Ա. Ժիմնազիոնի մէջ աւարտած է իւր ուսում, և ամուսնացած է ծանօթ փաստաւոր Տիար Ե. Տիգրանեանցի հետ:

Երկրորդ դուստրն է Աշխէն:

Երրորդ դուստրը, Շուշանիկ: Աստիք երկուքն ալ դեռ Թիֆլիսի օրիորդաց Ա. Ժիմնազիոնին մէջ ուսանող են:

Անդրանիկ տղան՝ Պաշ. երկրորդը՝ Աշի. երկուքն ալ դեռ ուսանող են Թիֆլիսի տղայացի Գ. դպրոցին մէջ: Կրտսեր տղան կ'ընդունի Պապաք. աս՝ դեռ անչափահաս՝ տունը կը պատրաստուի Ժիմնազիա մտնելու համար:

Պաշտօնացի Քառասնամեակին մասնակցած են Կովկասու Հայքն ու Հայուհիք, և արտասահմանի Կովկասեան ուսանողք: Օսմանեան Հայեր իրենց մասնակցութեան բացակայութեամբ կ'փայլին Պաշտօնացի Գրական Քառասնամեակի Աստուածարու մին կամ Յորեկատունին մէջ:

(Մենք, Արեւմտեան Հայքս, Լճի մեր գրական մեծ երբ փառաբանելու ենք արդեօք. կ'ընէր անցեալ օր մէկը. —Մենք զանոնք փառաբանելէ աւելի փառաստելը (*). քաջ գիտենք, կ'ըսէր ուրիշ մ'ալ:)

«Հանրագիտակ» Հայ մամուլն ներկայացուցիչներէն մին, կ'իշխէր բաժնէր մեր Կովկասեան Հայոց կողմանէ Պաշտօնացի Քառասնամեակի նկատմամբ Ազգային ընդհանուր համադրանաց ցոյցերն ու հանդիսաւորութիւններն:

ՆՄԱԳԻՐԱԿԱՆ ՁԵԿՈՅՑ ՄԸ

«Հանրագիտակ»ի սոյն թիւն արդէն մամուլ տակ էր երբ «Տարազ»ի մայիս 16ի թիւը՝ ուշ մնալէն յետոյ, ուր ուրեմն հասած էր, բերելով մեզ իւր Կովկասահայ նշանաւոր վիպասան ու բանաստեղծ Տ. Պերճ Պաշտօնացի գրական գործունէութեան Քառասնամեակին անմահացնող հանդիսաւոր ցոյցերու, պաշտօնական արարողութեանց բովանդակութիւնը: Ուստի մենք ևս այս անգամ զանց ընելով մեր թերթօնը՝ անոր տեղ՝ ի յիշատակ և ի պատիւ Տ. Պերճ Ս. Պաշտօնացի գրական Քառասնամեակին՝ նորա կենդանագրականը Տարազին համաձայն արտատպեցինք:

(*) Թեև միեմարելի զբոյց մը կը շրջի կարգ մը շրջանակաց մէջ, թէ մօտեւս Արեւելեան Մամուլ տեղ և խմբագիր Տիար Մ. Մամուրեանի Զբոյսանը Զմեռնաի կամ Պոլսոյ մէջ պիտի կատարուի:

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՍԻԼԻՎԵՐԻ.—Մ. Մալաքեան էֆ.—Ստա-
ցած ենք գրութիւնները :

ԽՕՍՍՈՒՆԻ.—Նոր բաժանորդի թերթերուն
հետ զրկուեցան ընկալագրերը :

ՖԻԶՊԸՐԿ.—Մ. Ռուբինեան էֆ.—Կը
ղրկենք այս թղթատարով, նախորդ շրջանի
հաւաքածոն :

ԱՅՏԸՆ.—Օր. Զապէլ Եսգըճեան.—Նա-
մակնիդ ստացած ենք, պատասխանուած է :

ԲԵՍՍՊ.—Ս. Պօղիկեան էֆ.—Արձանա-
գրած ենք, և թերթ կը զրկենք Ուզունեան
Աւետիս էֆ.ի :

ԿԷԼԻՊՕԼՈՒ.—Դրիգոր էֆէնտի.—Ձեր
նամակի համաձայն պէտք եղած տեղը դի-
մում կ'ընենք :

ԱՏԱՔԱՋԱՐ.—Գործակալ.—Յանձնեցինք
նախորդ շրջանէն ուզուած թիւերը, Թորիկ
էֆէնտի :

ԱՏԱՔԱՋԱՐ.—Յարութիւն էֆ. Վեցմատ-
եան.—Շնորհակալութիւն Ձեր առ Հանրա-
գիտակ տածած ջերմ համակրանքին. հոգ
չէ՛, վճարումը ուղղակի մեր գործակալին
կրնաք ընել :

ՁԷՆԿԻԼԷՐ.—Կարապետ էֆ. Սէօլէղեան.
—Շնորհակալութիւն համակրալիր նամակ-
նով. ուզած թիւերնիդ ձգեցէք. մենք ա-
մէն շաբթու կանոնաւորապէս կը զրկենք
թերթերը :

ԻԶՄԻՏ.—Զգօն էֆ. Ա. Աղարեան.—
Զգօնագոյն ըլլալնիդ փախաքելի էր՝ ձեր
նմանեաց պէս : Հանրագիտակ խորհուրդի
պէտք չունի, ի՛ր ըսածը ըսած է. և ի՛նչ որ
գրած է, անաչառօրէն գրած է, միշտ ի նկա-
տի առնելով երկրին և ժողովուրդին հան-
րային շահն ու օգուտը, ներկայ թէ ապա-
գայ, իրեն սովորական շրջահայեաց հեռա-
տեսութեամբ :

ՍՈՒ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ
ՎԻՃԱԿԱՅԻՆՍ

Շնորհակալ ենք Ձեր համակրալիր քաջա-
լերականներէն, զոր Ձեր մէն մի քաղաքնե-
րէն, գիւղերէն նոյն իսկ Պոլսէն սիրած էք
յղել առ Հանրագիտակ, Ձեր հանրային խընդ-

րոյն նկատմամբ իւր հրատարակութեանց հա-
մար : Սակայն՝ դիտնալու էք, թէ Հանրագի-
տակ չէ թէ սա կամ նա կուսակցութեան
սիրելի կամ ատելի ըլլալու համար, չէ թէ
իւր սիւնակները՝ սա կամ նա թերթերուն
պէս վաճառելու համար, այլ ճշմարտութիւ-
նը, արդարութիւնը, իրաւունքը երկրին,
Ազգին, Տէրութեան ու ժողովրդին օրինա-
կան ու սկզբնական շահուց համեմատ, պաշտ-
պանած ըլլալու համար միայն : Հանրագի-
տակ՝ անձնակոն ու կուսակցական շահերէն
ու նկատումներէն շատ վեր ու շատ անկա-
խօրէն կ'պաշտէ ու կ'պաշտպանէ հանրային
շահը : Այս է իւր սկզբունքը :

Արդէն Ազգային Վարչութեան պատուի-
րակ Վսեմ. Իլիաս էֆ. Չայեան, որ կարող
վարչագէտ և նշանաւոր դիւանագէտ մ'է,
իրեն պատասխանատու դիրքին մեծութեան
վայել իմաստուն, հեռատես ու շրջահայեաց
եղանակաւ մը՝ յաջողած է ամէն տեղ և ա-
մէն առնէն չարեաց շարժառիթ անհասկացու-
թեանց պատճառները լաւ ուսումնասիրել,
և տարակարծիք կուսակցութեանց թեր ու
դէմ մտածումները լաւ հասկնալ : Ասով հար-
թած յարգարած է ամէն դժուարութիւններ :
Հետեւապէս՝ հարկ չի կայ առ Ազգ. Վար-
չութիւն՝ ընդդէմ կարգ մը հակառակորդ-
եանց դէմ, Ձեր մատուցանելիք բազմաստո-
րազիր բողոքագրերը, Պատրիարքարան ղըր-
կելու : Հակառակորդեանք, խօսք ու խոս-
տում տուած են որ, այլ ևս արգելք ու խա-
փան չի պիտի լինին Ձեր գաւառաչէն Առաջ-
նորդ Ս. Հօր, իւր գաւառին ժողովները, խոր-
հուրդները ու վարչական կամ դպրոցական
մարմինները իրապէս օգտակար կերպով կազ-
մակերպելու մասին : Ձեր Առաջնորդը պիտի
շարունակէ Ձերն ըլլալ, ալ աւելի ժրօրէն շա-
րունակելու համար իրեն գաւառաչէն գոր-
ծունէութիւնը : Վանքն ու գաւառն ալ պի-
տի շարունակեն իրենց ցարդ սովորական ի-
րարմէ ունեցած անկախ վիճակին, հետե-
ւաբար և իրարու՝ նիւթապէս կամ բարոյա-
պէս ձեռնտու, ինչպէս եղած են ի սկզբանէ
մինչեւ ցարդ :



Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԷՑԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ձինական, Հնդկական և ճարտնական
ամենաընտիր տեսակէ եղող արտադրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշգիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ձէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. այն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն զը-
նահատուած ըլլալով, շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են, որոնք
զգուշանալու համար, վերոյիշեալ վա-
ճառանիշին տակ Կ. Եսվրուեան և
Իսաղուլեան ստորագրութիւնը փնտրե-
ցէք:

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ
(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՔ

Դիմեցէք առանց երկմտելու, Գուժ-
Գափու Ջարիֆեան դեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ս. Ջարիֆ-
եան էֆ. ի հնարած «Հակակոչային»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:
Գաւառներէ ուղղորդու կը ղրկուի
թղթատարով:

ՀԱՅ ՇԱՔԱՐԱՎԱՃԱՌ

Եթէ կուզէք պատուական, համով
հոտով և աժան «լոգումէքէրի» ուտել,
դիմեցէք առ Սարգիս էֆ. Սլէմեան,
Էսկի-Չապթիյէ, թիւ 57, ճիշդ թուր-
քիա Օթէլի անկիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄՍՄՈՒԼ-29րդ Տարի, կիսամաթերթ
ազգային, Գրական և Քաղաքական, Խմբագիր-Տնօրէն
Մ. Մամուրեան: - Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
Փրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 Փրք-
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

ԲԱԶՄԱՎԵՊ— 57րդ տարի, ամսաթերթ, Հայ մատե-
նագրական, ստուգաբանական, պատմական, քերական-
ական, աշխարհագրական, հնախօսական, և ընդ - Տա-
րեկան կանխիկ, 10 Փրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",
St. Lazare Venise (Italie)

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ — 13րդ տարի, ամսաթերթ.
Հայ-գրական յօդուածներէն զատ ճշտիւ տեղեկութիւն
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան և Է. ի
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-
րայ և ընդ - Տարեկան կանխիկ 10 Փրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII² Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Կ'ստորագրէ մի-
նչպէս ինքնաշնորհ-խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ,
որոնք պէտք է, առանց բացառութեան,
վերաբերեալ ամէն գործառնու-
թեամբ համար:

در علیّه ده بفتح قوسنده اسکی
۱۹ نومرولی دکانه «مجموعه علوم» غزنه سی
سر محرری (بولاد) افندی به

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու:
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul